ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 71 -2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 09 » « 02 » 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Է. Աբրահամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1075. Մշակութային ժառանգության ծրագիր» ծրագրի «11003. Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել հայկական հուշարձանների վավերագրերի կազմման և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2,

1.1.3. տեխնիկական բնութագրի՝ Հավելված N 3,

1.1.4. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի Հավելված N 4:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ

պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների

ժամանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային)կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 5-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային

հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. միջոցառման իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառման իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառմանն աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում,

2.4.15. հուշարձանների վավերագրերի կազմման աշխատանքներն իրականացնել՝ Հավելված N 3-ի պահանջներին համապատասխան,

2.4.16. պետական մարմնին ներկայացնել ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն Հավելված N 6-ի:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է **58225.2** հազար (հիսունութ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ համաձայն Հավելված N 4-ի կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 7-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Գյուլբենկյան 38ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշին բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032373	Հ/Հ 2474500069910000,
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00053543
	Հեռ.՝ 094 133 701
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
02698732 Հ. Հակոբյան	Է. Աբրահամյան
Կ.Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
« 09 » « 02 » 2024 թ.
N ՄՇԴ - 71 -2024 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրերի կազմման

1	Կազմակերպության անվանում	Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք. Երևան, Գյուլբենկյան 38ա (իրավաբանական հասցե) Ք. Երևան Մ.Բաղրամյան 24 (գործունեության հասցե)
3	Ծրագրի անվանում	**Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրերի կազմման ծրագիր**
3.1	Բովանդակություն	Արտերկրում **հայկական մշակութային ժառանգության հաշվառում և պատմամշակութային հուշարձանների վավերագրերի կազմում**
3.2	Նպատակ	Արտերկրում առկա հայկական մշակութային ժառանգության հաշվառում, հայկական մշակութային ժառանգության մասին միջազգային հանրության իրազեկվածության մակարդակի բարելավում, օբյեկտիվ տեղեկատվության ավելի լայն լսարանի ներգրավում, միջազգային լրատվամիջոցներում Արտերկրում առկա հայկական մշակութային ժառանգության պահպանության բարձրաձայնում
3.3	Անցկացման ժամկետ	մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ը
3.4	Անցկացման վայր	արտերկիր
3.5	Ակնկալվող արդյունքներ	Արտերկրում առկա հայկական մշակութային ժառանգության հաշվառում և պահպանություն
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Առաջին փուլ հունիսի 30՝ 200 վավերագիր Երկրորդ փուլ դեկտեմբերի 30՝ 170 վավերագիր Ընդամենը՝ 370 վավերագիր Ընդամենը՝ 4 գիրք

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011032373
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ
ք. Երևան, Գյուլբենկյան 38ա
«Արդշին բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500069910000,
ՀՎՀՀ 00053543
Հեռ.՝ 094 133 701

Նախագահ՝
_____ Է. Աբրահամյան

Կ.Տ.

Հավելված N 2
« 09 » « 02 » 2024 թ.
N ՄՇԴ - 71 - 2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայկական պատմամշակութային հուշարձաների վավերագրերի կազմման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրություն** (ներառյալ հարկերը)*				**21588,0**
1,1	Հիմնադրամի տնօրեն	ամիս	12	135,000	1620,0
1,2	Հաշվապահ	ամիս	12	104,000	1248,0
1,3	Պատմաբան	ամիս	12	104,000	1248,0
1,4	Թվայնացնող	ամիս	12	104,000	1248,0
1,5	Բանասեր (2 մարդ)	ամիս	12	104,000	2496,0
1,6	Ծրագրավորող	ամիս	12	104,000	1248,0
1,7	Լուսանկարիչ	ամիս	12	104,000	1248,0
1,8	Ճարտարապետ	ամիս	12	104,000	1248,0
1,9	Ձեռագրագետ	ամիս	12	104,000	1248,0
1,10	Բանասեր, խմբագիր	ամիս	12	104,000	1248,0
1,11	Անգլերենի թարգմանիչ	ամիս	12	104,000	1248,0
1,12	Թուրքագետ, արաբագետ	ամիս	12	104,000	1248,0
1,13	Եռաչափ մոդելավորող	ամիս	12	104,000	1248,0
1,14	Օպերատոր	ամիս	12	104,000	1248,0
1,15	Գրաֆիկ դիզայներ	ամիս	12	104,000	1248,0
1,16	Վարորդ	ամիս	12	104,000	1248,0
2	**Գործուղման ծախսեր, այդ թվում** (Արևմտյան Հայաստանի Կարսի մարզի Բաշ-Շորագյալ, Ռուսական Բասեն գավառների, ինչպես նաև Բիթլիսի նահանգի Սասուն գավառ)				**21533,2**
2,1	օրապահիկ (6 մարդ x 81 օր x 62 դոլար x 405 դրամ)	մարդ/օր	486	25,110	12203,5
2,2	գիշերավարձ (6 մարդ x 81 օր x 47.4 դոլար x 405 դրամ)	մարդ/օր	486	19,197	9329,7
3	**Կապի ծախսեր, այդ թվում**				**399,8**
3,1	ինտերնետային սպասարկում (տարեկան հաշվարկով)	տարի	1	216,000	216,0
3,2	միջքաղաքային խոսակցությունների վճար (տարեկան միջին հաշվարկով)	տարի	1	82,800	82,8
3,3	3 կայքէջի սպասարկում (տարեկան հաշվարկով) ((https://raa-am.org; https: // artsakhmonuments.org; https: //armenianarchitecture.org))	տարի	1	101,000	101,0
4	**Գրքերի տպագրություն, այդ թվում**				**5000,0**

	«Ադրբեջանը և հայ քաղաքակրթության ոչնչացումը». գիրք (անգլերեն)	օրինակ	500	4,000	2000,0
4,2	«Խոջիվանք». գիրք (հայերեն)	օրինակ	500	1,500	750,0
4,3	«Համբարձում Երամյան». գիրք (հայերեն)	օրինակ	500	1,500	750,0
4,4	«Վարձք». Հանդես (2 համար, յուրաքանչյուրը՝ 500 օրինակ)	օրինակ	1000	1,500	1500,0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**48521,0**
	ԱԱՀ**				**9704,2**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**58225,2**
	*Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:				
	**ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող»
հիմնադրամ
Երևան, Գյուլբենկյան 38ա
«Արդշինինվեստ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500069910000
ՀՎՀԿ 00053543
Հեռ.՝ 52 15 25
Նախագահ՝

_____ Է. Աբրահամյան
Կ.Տ.

Հավելված N 3

« 09 » « 02 » 2024 թ.

N ՄՇԴ - 71 - 2024 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրերի կազմման

Հ/Հ	Աշխատանքի բովանդակության նկարագրությունը	Կատարման արդյունքների ձևակերպումը
	ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ	քանակը՝ 370 հատ
1.	**1. ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**	ա) Տիպային անվանումը բ) Հատուկ անունը գ) Այլ անվանումներ դ) Օգտագործումը՝ սկզբնական, հաջորդական և ժամանակակից ե) Սկզբնական պատկանելիությունը զ) Պահպանական միավորի անվանումը
	2. ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ	ա) Մարզը-համայնքը-բնակավայրը բ) Հասցեն գ) Տեղագրությունը, տեղական տոպոնիմները դ) Հեռավորությունը եւ դիրքը բնակավայրից - բնակավայրի ներսում - բնակավայրի դրսում ե) Աշխարհագրական կոորդինատները զ) Տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից է) Ջրագրությունը ը) Համառոտ նկարագրություն
	3.ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ	ա) Մշակութային պատկանելիությունը, դարաշրջանը, դարը /դարերը/ բ) Կառուցման ժամանակը տարեթվերով գ) Թվագրման հիմնավորում - ըստ հավաստի փաստաթղթի - ըստ վիմագրության - ըստ մատենագիտական աղբյուրների դ) Հեղինակը (հեղինակները) անունը - ազգանունը- (մասնագիտությունը) ե) Հեղինակի որոշման աղբյուրը զ) Հուշարձանի ժամանակագրական աղյուսակը (ժամանակը-հեղինակը-

	4.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ-ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ	աշխատանքները) է) Հուշարձանի ուսումնասիրման ժամանակագրական աղյուսակը ը) Պատմական համառոտ տեղեկանքը ա) հնագիտական մաս՝ շերտագրությունը, գտածոները բ) ճարտարապետական մաս՝ ճարտարապետական հորինվածքը գ) դեկորատիվ մոնումենտալ արվեստի մաս՝ հորինվածքը, գունային լուծումները դ) Շինանյութը (տեսակը, գույնը) ե) Բացվածքները 1) մուտքերը (քանակը), (կողմնորոշումը) 2) լուսամուտները (քանակը), (կողմնորոշումը) զ) Հարկայնությունը (լրացուցիչ տեղեկանք) է) Կոնստրուկցիաները ը) Տանիքը՝ նյութը եւ ձեւը թ) Իրականացման տեխնիկան (շինանյութի մշակումը), (շարվածքի չափը), (շարվածքի տիպը), (երեսապատումը) ժ) Հարդարանքը ի) Տիպը լ) Պատկերագրությունը, բովանդակությունը խ) Չափսերը (երկարությունը), (լայնությունը) (բարձրությունը), (խորությունը), (տարածքի մակերեսը) ծ) Պահպանվածությունը 1) Որակական - լավ - միջին - վատ - վթարային 2) Քանակական - 1/4 - 2/4 - 3/4 - 4/4 կ) Արժեքավորում հ) Չափագրություններ - գլխավոր հատակագիծ - հատակագիծ - ճակատներ - կտրվածք
2.	Ստացված նյութի մշակում և թողարկում	Կատարված աշխատանքների նյութերի ներկայացում ալբոմի /գրքի/ ձևով՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակով

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032373
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ
ք. Երևան, Գյուլբենկյան 38ա
«Արդշին բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500069910000,
ՀՎՀՀ 00053543
Հեռ.՝ 094 133 701

Նախագահ՝

_____ Է. Աբրահամյան

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
« 09 » « 02 » 2024 թ. N ՄՇԴ - 71 -2024
պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1075	Միջոցառում 11003	Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը				
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ եռամսյակների				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Տարի
1	2					
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	14741,6	14741,6	14741,6	14000,4	58225,2
Ընդամենը		**14741,6**	**14741,6**	**14741,6**	**14000,4**	**58225,2**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032373
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայկական ճարտարապետությունն
ուսումնասիրող» հիմնադրամ
Երևան, Գյուլբենկյան 38ա
«Արդշինինվեստ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500069910000
ՀՎՀՀ 00053543
Հեռ. 52 15 25
Նախագահ՝
_____ Է. Աբրահամյան
Կ.Տ.

Հավելված N 5
« 09 » « 02 » 2024 թ.
N ՄՇԴ - 71 - 2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

Հավելված N

« 09 » « 02 » 2024 թ

N ՄՇԴ - 71 - 2024 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքականության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառներ (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները, սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումներ)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

« » « » 2024 թ.

Կազմակերպության ղեկավարը՝

_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 7
« 09 » « 02 » 2024 թ.
N ՄՇԴ - 71 - 2024 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032373
ՀՎՀՀ՝ 02698732

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան « » « » 2024

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը՝ N ՄՇԴ « » « » 2024 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____-ի *(անուն, ազգանուն)* և կազմակերպությունը, ի դեմս « նախագահ _____-ի *(անուն, ազգանուն)*, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2024 թ. եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2024 թ. N « » եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակում իրականացրել է միջոցառումը, իսկ պետական մարմինը վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝ **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Նախագահ՝

---------- ----------

Կ.Տ. **Կ. Տ.**

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝